

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### Նախագծի առնչությամբ

2024 թվականի հունվարի 24-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը<sup>1</sup>:

Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է վերաշարադրել Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ավելացնելով փաստաբանական ծառայություն մատուցողներին շրջանառության հարկ չվճարող սուբյեկտների շարքում:

Նախագիծն ընդունվելու դեպքում 2024 թվականի հոկտեմբերի 1-ից փաստաբանական ծառայություններ մատուցող տնտեսվարողները 5 տոկոսի փոխարեն վճարելու են 10 տոկոս հարկ, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից շուրջ 20 տոկոս ԱԱՀ և 18 տոկոս շահութահարկ, որը հաշվարկվելու է հարկվող շահույթի՝ հարկային տարվան վերագրվող համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունից:

Նախագծի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքը ստանալու նպատակով Պաշտպանին է դիմել Փաստաբանների պալատի նախագահը:

#### **Ժողովրդավարական հասարակությունում փաստաբանների առանցքային դերակատարության առնչությամբ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է ժողովրդավարական հասարակությունում փաստաբաններին վերապահված հիմնարար դերակատարությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը, և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

<sup>1</sup> Այսուհետ՝ Նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/6762> հղումով:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ *իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի (փաստաբանի մատչելիության իրավունքի) նպատակն է արդարության իրականացման թերացման կանխարգելումը և, առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակների իրականացումը, հատկապես, քննչական մարմինների ու դատախազության և մեղադրյալի միջև զենքերի հավասարության ապահովումը*: Բեուզեն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (փաստաբանի մատչելիության իրավունքը) հակակշռում է կասկածյալի խոցելիությանն ազատությունից զրկման վայրերում, ոստիկանության կողմից կասկածյալների նկատմամբ հարկադրանքի և վատ վերաբերմունքի հիմնարար երաշխիք է, ինչպես նաև ապահովում է մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը<sup>2</sup>:

ԵԽ խորհրդարանական վեհաժողի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի 2020 թվականի հանձնարարականի համաձայն՝ փաստաբանի մասնագիտության ազատությունը հանձնարարականի հիմնարար սկզբունքներից է: Հանձնարարականում նշվում է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հարգելու, պաշտպանելու և խթանելու փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը՝ առանց խտրականության և առանց իշխանությունների կամ հասարակության ոչ պատշաճ միջամտության: Պետությունները պետք է ձգտեն ստեղծելու իրավաբանների համար հարկման, կենսաթոշակային ապահովման և այլ սոցիալական արտոնությունների արդյունավետ, հավասարակշռված համակարգ՝ հիմք ընդունելով փաստաբանի մասնագիտությունը<sup>3</sup>:

Պետությունները պետք է ապահովեն, որ փաստաբանները չտուժեն կամ նրանց չսպառնան քրեական հետապնդմամբ կամ վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցներով որևէ գործողության համար, որը կատարվել է մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկայի կանոններին համապատասխան<sup>4</sup>:

ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականում փաստաբանի մասնագիտության ազատության վերաբերյալ նշվում է, որ փաստաբանների միությունները

---

<sup>2</sup> Տե՛ս Բեուզեն ընդդեմ Բելգիայի (Beuze v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 71409/10, կետեր 125-130:

<sup>3</sup> Տե՛ս ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ AS/Jur (2020) 18 հանձնարարականը, «Փաստաբանների սկզբունքներն ու երաշխիքները», 2020թ., հասանելի է <https://assembly.coe.int/LifeRay/JUR/Pdf/DocsAndDecs/2020/AS-JUR-2020-18-EN.pdf> հղումով:

<sup>4</sup> Տե՛ս ՄԱԿ, Փաստաբանների դերի հիմնական սկզբունքները, 1990թ., հասանելի է <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/basic-principles-role-lawyers> հղումով:

կամ այլ պրոֆեսիոնալ իրավաբանների ասոցիացիաները պետք է խրախուսվեն՝ ապահովելու փաստաբանների անկախությունը և, ի թիվս այլնի, պաշտպանելու փաստաբանների դերը հասարակության մեջ և, մասնավորապես, պահպանելու նրանց պատիվը, արժանապատվությունը և ազնվությունը, ինչպես նաև խրախուսելու փաստաբանների մասնակցությունը տնտեսապես թույլ վիճակում գտնվող անձանց արդարադատության մատչելիությունն ապահովելու ծրագրերին, մասնավորապես՝ իրավաբանական օգնության և խորհրդատվության տրամադրմանը<sup>5</sup>:

Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ: Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հոգուտ վստահորդի շահերի իրականացված գործողությունները չեն կարող համարվել վստահորդի հետ նույնացում:

«Փաստաբանի մասնագիտության մասին» եվրոպական կոնվենցիայի մշակման գործի վերաբերյալ 2018 թվականի թիվ 2121 հանձնարարականում Խորհրդարանական վեհաժողովը վերահաստատել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն տեսակետը, որ փաստաբանների հատուկ դերը նրանց առանցքային դիրք է հատկացնում արդարադատության իրականացման գործում՝ որպես գլխավոր դերակատարներ և միջնորդներ հանրության և դատարանների միջև: Նրանք առանցքային դեր են խաղում՝ ապահովելու, որ դատարանները, որոնց առաքելությունը հիմնարար է իրավունքի գերակայության վրա հիմնված պետությունում, վայելեն հանրային վստահություն: Որպեսզի հանրության անդամները վստահեն արդարադատության իրականացմանը, նրանք պետք է վստահեն փաստաբանների՝ արդյունավետ ներկայացուցչություն ապահովելու կարողությանը<sup>6</sup>:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում նշվում է, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի փաստաբանի միջոցով արդյունավետ պաշտպանության իրավունքն արդար դատաքնության հիմնարար հատկանիշներից է<sup>7</sup>:

<sup>5</sup> Տե՛ս ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականը, հասանելի է <https://www.ibanet.org/MediaHandler?id=c0a1f2cc-0a0c-4e97-a180-fa6fc53b4a32> հղումով:

<sup>6</sup> Տե՛ս ԵԽ, Խորհրդարանական վեհաժողով, «Փաստաբանի մասնագիտության մասին» եվրոպական կոնվենցիայի մշակման գործի վերաբերյալ 2018 թվականի թիվ 2121 հանձնարարականը, հասանելի է <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=24466&lang=en> հղումով:

<sup>7</sup> Տե՛ս Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (Salduz v. Turkey [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, զանգատ թիվ 36391/02, կետ 51, Իբրահիմը և մյուսներն

ՄԱԿ-ի հանցագործության կանխարգելման և հանցագործների նկատմամբ վերաբերմունքի մասին ութերորդ կոնգրեսի ընթացքում ընդունված՝ «Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքների» համաձայն՝ կառավարություններն իրենց տարածքում և օրենսդրության սահմաններում, առանց որևէ տարբերակման, պետք է ապահովեն բոլոր անձանց համար արդյունավետ և հավասար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի գործուն ընթացակարգեր և բավարար կառուցակարգեր<sup>8</sup>:

Պետությունները պետք է ապահովեն փաստաբանների արդյունավետ և հավասար հասանելիության պատշաճ ընթացակարգերի և արձագանքող կառուցակարգերի հասանելիությունը բոլոր անձանց համար, ովքեր գտնվում են պետության տարածքում և իրավասության ներքո՝ առանց որևէ տեսակի խտրականության, ինչպիսիք են՝ ռասան, մաշկի գույնը, էթնիկական ծագումը, սեռը, լեզուն, կրոնը, աշխարհայացքը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային վիճակը, տնտեսական կամ այլ կարգավիճակը<sup>9</sup>:

Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներն ու ուղենիշները պետություններին խորհուրդ են տալիս միջոցներ ձեռնարկել փաստաբանների համար տնտեսապես և սոցիալապես ապահով վայրերում աշխատելու խթաններ նախատեսելու համար (օրինակ՝ հարկերից ազատում, կրթաթոշակների տրամադրում)<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ փաստաբանները զգալի դեր ունեն քրեական վարույթի ընթացքում, հատկապես՝ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված կարգավորումների պայմաններում ձերբակալված անձի ու մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի՝ հաշվի առնելով փաստաբանների հիմնարար դերը

---

ընդդեմ Միացյալ Թագավորության (Ibrahim and Others v. the United Kingdom [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 50541/08, 50571/08, 50573/08 և 40351/09) կետ 255, Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (Simeonovi v. Bulgaria [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21980/04, կետ 112, Բեզե ընդդեմ Բելգիայի (Beuze v. Belgium [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 71409/10, կետ 123:

<sup>8</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Փաստաբանների դերի հիմնական սկզբունքները, 1990թ., հասանելի է <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/basic-principles-role-lawyers> հղումով:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներն ու ուղենիշները, 11-րդ ուղեցույց (պարբերություն 56 (բ)), հասանելի է [https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UN\\_principles\\_and\\_guidelines\\_on\\_access\\_to\\_legal\\_aid.pdf](https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UN_principles_and_guidelines_on_access_to_legal_aid.pdf) հղումով:

ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության ապահովման հարցում՝ փաստաբանական գործունեությունը չի կարող ուղղակիորեն հավասարեցվել ձեռնարկատիրական այլ գործունեության տեսակներին:

Պաշտպանը կարևորում է նաև փաստաբանների կողմից փաստաբանի մասնագիտական գործունեության անկախության սկզբունքը, փաստաբանական էթիկայի սկզբունքները և փաստաբանի վարքագծի կանոնները պահպանելու անհրաժեշտությունը, ինչն ամրագրված է ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ:

Փաստաբանների դերի հիմնական սկզբունքները և Իրավաբանների միջազգային ասոցիացիայի իրավաբանի մասնագիտության անկախության չափանիշները հանդիսանում են ուղենիշային գործիքներ, որոնք ճանաչում են իրավաբանի անկախության սկզբունքը որպես ժողովրդավարական հասարակության ու իրավունքի գերակայության կարևոր բաղադրիչ և մարդու իրավունքների արդյունավետ կիրարկման անհրաժեշտ նախապայման<sup>11</sup>:

Իր գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի՝ քաղաքական, տնտեսական և մտավոր առումով՝ հաճախորդին խորհրդատվություն տրամադրելու և ներկայացուցչությունն ապահովելու հարցերում<sup>12</sup>:

Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է լինի անկախ, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում և դատարավարությունների ժամանակ<sup>13</sup>:

---

<sup>11</sup> Տե՛ս Իրավաբանների անկախության սկզբունքը. ՄՄԿ-ի և Իրավաբանների միջազգային ասոցիացիայի տեղեկատու փաստաթղթերը, 2020թ., հասանելի է <https://www.ibanet.org/MediaHandler?id=3b458c65-53f4-41b1-a1b2-0f765a7c39b3> հղումով:

<sup>12</sup> Տե՛ս Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի Եվրոպական փաստաբանի մասնագիտության հիմնական սկզբունքների խարտիան և Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնները, 2013թ., հասանելի է [https://www.ccbe.eu/NTCdocument/EN\\_CCBE\\_CoCpdf1\\_1382973057.pdf](https://www.ccbe.eu/NTCdocument/EN_CCBE_CoCpdf1_1382973057.pdf) հղումով:

<sup>13</sup> Տե՛ս շՇ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշումը, 2019թ., հասանելի է [https://advocates.am/images/general\\_meetings/2019/Kanonagirk\\_19.10.2019.pdf](https://advocates.am/images/general_meetings/2019/Kanonagirk_19.10.2019.pdf) հղումով:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ զեկույցում Հատուկ զեկուցողը կարևորել է փաստաբանների ասոցիացիայի գործադիր մարմնի անդամների ընտրության գործընթացի թափանցիկ և մասնակցային լինելու անհրաժեշտությունը՝ խուսափելով կորպորատիվությունից կամ գործընթացի քաղաքականացումից, ինչը կարող է կասկածի տակ դնել նրանց հիմնական գործառույթը, այն է՝ ապահովել փաստաբանի մասնագիտության ազատ իրականացումը՝ անկախության պահպանմամբ ու առանց անհարկի միջամտության<sup>14</sup>:

### **Նախագծի հիմնավորումների առնչությամբ**

Նախագծի հիմնավորումներում նշվում է, որ Նախագծի ընդունումը պայմանավորված է շրջանառության հարկի համակարգի և հարկման ընդհանուր համակարգի բեռերի միջև տարբերության կրճատման, տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվող ծախսերի փաստաթղթավորման խթանները մեծացնելու, ինչպես նաև ՓՄՁ համար նախատեսված երկու հարկման համակարգերն ավելի հասցեական դարձնելու անհրաժեշտությամբ: Ըստ Նախագծի հիմնավորումների՝ շրջանառության հարկի համակարգի՝ որպես հարկման հիմնական համակարգին այլընտրանքային համակարգի հիմնական նպատակը տնտեսվարող սուբյեկտների համար պարզ հարկային հաշվառման և մեղմ վարչարարության պայմաններում գործունեություն ծավալելու հնարավորության ապահովումն է: Ըստ նախագծի հիմնավորումների՝ ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տալիս, որ շրջանառության հարկի համակարգը հարկման ընդհանուր համակարգին այլընտրանքային համակարգ լինելու փոխարեն վերածվել է հարկման արտոնյալ համակարգի: Մասնավորապես, տնտեսական գործունեության առանձին ոլորտներում համեմատվել են հարկման ընդհանուր համակարգի (ԱԱՀ և շահութահարկ) և շրջանառության հարկի համակարգի հարկային բեռերը: Ըստ հիմնավորումների՝ գրեթե բոլոր ոլորտներում (բացառություն են կազմում այն ոլորտները, որոնցում կատարվող հիմնական գործարքները ազատված են ԱԱՀ-ից) հարկման ընդհանուր համակարգի հարկային բեռն անհամեմատ ավելի բարձր է, քան շրջանառության հարկի բեռն է:

---

<sup>14</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ զեկույցը, 2022թ., հասանելի է <https://independence-judges-lawyers.org/wp-content/uploads/2022/10/English.pdf> հղումով:

Արդյունքում, Նախագծով փաստաբանական ծառայություն մատուցող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը հարկվելու են Հարկային օրենսգրքով սահմանված ընդհանուր հարկման համակարգի շրջանակներում, այն է՝ ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով՝ վերացնելով «արտոնյալ ռեժիմը»՝ ինչպես նշվում է նախագծի հիմնավորումներում:

Նախագիծը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին չի ուղարկվել կարծիքի: Միննույն ժամանակ, Ֆինանսների նախարարության հետ հաղորդակցության արդյունքում խնդիրը հասցեագրվել է և ձեռք է բերվել պայմանավորվածություն Նախագիծը Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին ուղարկելու առնչությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 191 հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման 15-րդ կետի կարգավորումների և մարդու իրավունքների ազգային հաստատություններին վերաբերելի միջազգային չափանիշների համաձայն՝ մարդու իրավունքներին վերաբերող և նշված համակարգի վրա ազդեցություն ունեցող բոլոր նախագծերը պետք է ուղարկվեն Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի, ինչը պետք է նկատի ունենան պետական իշխանության բոլոր մարմինները:

Հասարակական կազմակերպությունները, փաստաբանական պալատը և այլ շահագրգիռ կազմակերպություններ ինչպես հրապարակային, այնպես էլ գրավոր Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրել են մտահոգություններ այն մասին, որ իրենց մասնագիտական դիտարկումները հաշվի չեն առնվել նշված գործընթացում: Նկատի ունենալով, որ օրենսդրական նախաձեռնությունն ունի հանրային նշանակություն և կարող է դերակատարություն ունենալ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա, Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում հարցին անդրադառնալ ներքոհիշյալ դիտարկումների համատեքստում:

Հարկային ու դրամավարկային քաղաքականություն մշակելիս իշխանություններն ունեն հայեցողության լայն շրջանակ: Ընդ որում, տնտեսական կամ սոցիալական ռազմավարական ընդհանուր միջոցառումների, այդ թվում՝ հարկման ոլորտում քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս պետության թույլատրելի հայեցողության շրջանակը ևս լայն է:

Նշված հայեցողությունը, այնուամենայնիվ, բացարձակ չէ: Հայեցողական որոշումների կայացման ու կիրառման գործընթացում թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանության մարմինները պարտավոր են հարգել ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու իրավունքների հիմքում ընկած հիմնարար սկզբունքները, ինչպես նաև ժողովրդավարական ու իրավական պետության հիմքում ընկած արժեքները:

Մասնավորապես, նման փոփոխությունների համար անհրաժեշտ պայմաններ են՝ (1) ընդունվող որոշումների պատշաճ հիմնավորվածությունը, (2) որոշումների կայացման գործընթացի ապահովումը ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան, հատկապես՝ հանրային քննարկումների միջոցով:

Նման հարցերի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հարգում է օրենսդրի գնահատականն այն դեպքում, երբ դա զուրկ չէ ողջամիտ հիմքից<sup>15</sup>: Մասնավորապես, պետություններին կարող է տրվել որոշակի լրացուցիչ ազատություն հարկաբյուջետային գործառույթներն իրականացնելիս, սակայն իրավաչափության ստուգման պայմանով<sup>16</sup>:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ հարկերի վճարման քաղաքականության ոլորտում ազգային իշխանությունների կայացրած որոշումները սովորաբար ներառում են նաև քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների գնահատում<sup>17</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ Նախագիծը չունի հարկային քաղաքականության փոփոխության իրավաչափությունը գնահատելու պատշաճ հիմնավորում՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Ավելին, դրանում

---

<sup>15</sup> Տե՛ս Գասուս Դոսիե և Ֆյորդերտեքնիկ ՍՊԸ-ն ընդդեմ Նիդեռլանդների (Gasus Dosier- und Fördertechnik GmbH v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1995 թվականի ֆետրվարի 23-ի վճիռը, զանգատ թիվ 15375/89, կետ 60:

<sup>16</sup> Տե՛ս Բեժանիչև և Բաշկարադն ընդդեմ Խորվաթիայի (Bežanić and Baškarađ v. Croatia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի վճիռը, զանգատ թիվ 16140/15, 13322/16, կետ 64:

<sup>17</sup> Տե՛ս Միլվերֆունգի գյուղատնտեսական ընկերությունը ընդդեմ Իտալիայի (Azienda Agricola Silverfunghi S.a.s. and Others v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի հունիսի 24-ի վճիռը, զանգատ թիվ 48357/07, 52677/07, 52687/07 և 52701/07, կետ 103, Ռ.Սզ. ընդդեմ Հունգարիայի (R.Sz. v. Hungary) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2013 թվականի հուլիսի 2-ի վճիռը, զանգատ թիվ 41838/11, կետ 38 և 46, Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի (Christian Religious Organization of Jehovah's Witnesses v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի վճիռը, զանգատ թիվ 41817/10, կետ 45:



հաշվարկված չեն փոփոխության արդյունքում առաջ եկող մարդու իրավունքների պաշտպանության համակարգին առնչվող խնդիրները:

Նախագծի առնչությամբ չեն ներկայացվել իրավաբանական ծառայությունների ու օգնությունների մատուցման շուկայի վիճակի գնահատականը և հարկային ռեժիմի փոփոխության արդյունքում հնարավոր ազդեցության կանխատեսումները, չեն գնահատվել ռիսկերը մարդու իրավունքների պաշտպանության համակարգի առնչությամբ:

Օրենսդրի կողմից այդ առանձնահատկությունների հաշվառումն օբյեկտիվորեն կապված է համարժեքության սկզբունքի հետ, ինչը պահանջում է, որ գործունեության տեսակի՝ ընդհանուր հարկման համակարգից տեղափոխումը հատուկ հարկային համակարգ չկրի կամայական բնույթ: Ուստի՝ հարկային քաղաքականության ու սահմանած հարկային ռեժիմի հարցում փոփոխության համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել և հիմնավորել այն հանգամանքը, թե արդյոք տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են օրենսդրի կողմից նախկինում կայացված որոշման վերանայման:

Նախագծի հիմնավորումներում ներկայացված չեն մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա փոփոխության հնարավոր ազդեցությունն ու ռիսկերը, այդ թվում՝ անձանց իրավաբանական օգնություն ստանալու և դատարանի մատչելիության իրավունքների ապահովման տեսանկյունից, այն պայմաններում, երբ նախագծով առաջարկվող կարգավորումների արդյունքում հնարավոր է ծառայությունների մատուցման գների բարձրացում, ինչը կարող է ազդեցություն ունենալ փաստաբանական ծառայություններից օգտվող անձանց հիմնական իրավունքների, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք միջազգային հիմնարար փաստաթղթերով ամրագրված՝ արդար դատաքննության և դրա հիմնական բաղադրատարր՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման տեսանկյունից:

Պաշտպանը նկատում է նաև, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են բացասական հետևանքներ ունենալ նաև իրավաբանական օգնության հասանելիության վրա այն առումով, որ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների համար կղժվարանան քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունները (pro bono services): Այնինչ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով խրախուսվում է կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը:

Հարկային օրենսգրքի հոդված 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսը: Ստացվում է, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են բացասական հետևանքներ առաջացնել իրավաբանական օգնության մատչելիության համատեքստում, այդ թվում՝ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորության սահմանափակման առումով:

Հարկ է նշել նաև, որ ստվերային տնտեսության զարգացումն ունի հետադարձ կապ հարկային համակարգի հետ. հարկային բեռի մեծացումը հանգեցնում է ստվերային տնտեսության չափերի ավելացման:

Այս առումով պետության կողմից հարկային բեռի մեծացմանն ուղղված քաղաքականությանը զուգահեռ առաջանում է պետության նոր հարկային քաղաքականության արդյունքում առաջացող ռիսկերը գնահատելու պարտականություն:

Քննարկվող նախագծի առումով հարկ է նշել նաև, որ 2019 թվականին շրջանառված նույնաբովանդակ նախագծային կարգավորումների վերաբերյալ բարձրաձայնվել են մի շարք մտահոգություններ, որոնք դեռևս հրապարակային ձևաչափով չեն հասցեագրվել:

### **Հանրային քննարկումների կարևորության և մասնագիտական համայնքի հետ քննարկումների անհրաժեշտության առնչությամբ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, կարևորում է, որ ոլորտին վերաբերող ցանկացած փոփոխություն դիտարկվի ինչպես հարկաբյուջետային, այնպես էլ հանրության իրավունքների պատշաճ իրացման և դրանց պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտականության համատեքստում:

Հասարակության ժողովրդավարացման գործընթացի ապահովման տեսանկյունից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հատկապես կարևորում է օրենսդրական փոփոխությունների նախագծերի վերաբերյալ նախապես հանրային քննարկումների պատշաճ կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը:

Ֆինանսական ու, մասնավորապես, հարկային ոլորտում քաղաքականության մշակման ու իրականացման գործում կարևոր նշանակություն ունեն հանրային

քննարկումների կազմակերպումն ու դրանց անցկացումն ինչպես շահագրգիռ պետական կառավարման մարմինների, այնպես էլ մասնագիտական հանրույթների ու հասարակության լայն շրջանակների հետ, ինչպիսիք են՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, լրագրողները, համալսարանական համայնքի ներկայացուցիչները, և հատկապես՝ Փաստաբանական պալատի ներկայացուցիչները՝ որպես ոլորտի մասնագիտական համայնք:

Ըստ Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ հանրային մասնակցությունն իր մեջ ներառում է որոշումների կայացման գործընթացում բոլոր մասնակիցների, այդ թվում՝ որոշում կայացնողների կարիքների և շահերի ճանաչում և հաղորդակցում՝ հնարավորություն տալով հասարակությանը ազդելու որոշման վրա:

Քաղաքացիական մասնակցության ձևերից է ակտիվ ներգրավվածությունը, որը վերաբերում է որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիական մասնակցության հնարավորություններին, որոնք պետական իշխանությունների կողմից տրամադրվում են անհատներին, հասարակական կազմակերպություններին և ընդհանուր առմամբ, քաղաքացիական հասարակությանը: Այն կարող է ներառել փաստաթղթերի, ինչպես նաև քաղաքականության և օրենքների համատեղ մշակման համար աշխատանքային խմբերի կամ հանձնաժողովների ստեղծումը<sup>18</sup>:

Հանրային քննարկումների իրականացման պարտականությունը բխում է նաև Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված բազմակարծության և հրապարակայնության սկզբունքներից, որոնց համաձայն՝ Հարկային օրենսգրքում և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են նախապես դրանք քննարկելով ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների, գործարար միջավայրի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նախագծի նպատակների և հիմնավորումների վերաբերյալ հանրային քննարկումների պատշաճ կազմակերպումը՝ հաշվի առնելով հատկապես այն, որ Նախագծի դրույթները մեծ քննարկումների և մտահոգությունների առիթ են ստեղծել: Ուստի՝ նախագծային կարգավորումները պետք է

---

<sup>18</sup> Տե՛ս ԵՄ քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության համար ուղեցույցները, 2017թ., հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016807509dd](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807509dd) հղումով:

պատշաճ կերպով քննարկման առարկա դարձվեն բոլոր շահագրգիռ դերակատարների, այդ թվում՝ փաստաբանական համայնքի հետ:

Ի գիտություն ընդունելով, որ իրավասու գետատեսչությունը նախաձեռնել է կազմակերպել հանրային քննարկումներ, Պաշտպանը, այնուհանդերձ, կարևորում է, որպեսզի քննարկումների արդյունքում նախագիծն ունենա այնպիսի մշակում, որպեսզի հասցեագրվեն բոլոր շահագրգիռ կողմերի մտահոգությունները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նկատում է նաև, որ անհրաժեշտ է հանրությանն իրազեկել Նախագծի բովանդակության, դրանով առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև նախագծի վերաբերյալ նախատեսվող քննարկումներին մասնակցության հնարավորության մասին՝ նկատի ունենալով հանրային գործերի վարմանը մասնակցելու նրանց իրավունքը՝ այդ թվում՝ հանրային բանավեճի վրա ազդեցություն ունենալու միջոցով<sup>19</sup>:

*Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ թեև պետությունն ունի հարկային քաղաքականությունը որոշելու լայն հայեցողություն, սակայն քննարկվող նախագծի առումով չի ներկայացվել միջազգային չափանիշներին համապատասխան՝ հարկային քաղաքականության փոփոխության իրավաչափությունը գնահատելու անհրաժեշտ հիմնավորում, չի ներկայացվել նոր կարգավորման՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա հնարավոր ազդեցությունների ու ռիսկերի գնահատում, ինչպես նաև չեն իրականացվել պատշաճ հանրային իրազեկման աշխատանքներ և շահառուների հետ անհրաժեշտ քննարկումներ:*

---

<sup>19</sup> Տե՛ս ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 25-ը Հանրային գործերին մասնակցելու իրավունք, ձայնի իրավունք և հանրային ծառայության հավասար հասանելիության իրավունքի վերաբերյալ, CCPR/C/21/Rev.1/Add.7, հասանելի է <https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/general%20comment%2025.pdf> հղումով: